«ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
կուսակցություն

"ARMENIAN EAGLES. UNITED ARMENIAN"
party

партия "АРМЯНСКИЕ ОРЛЫ. ЕДИНАЯ АРМЕНИЯ"

ՀՀ, ք. Երևան, Երկաթուղայինների 2-րդ փ., տուն 2/3, ☎(+374 10) 43-50-34, ֆաքս (+374 10) 43-50-34, (+374 77) 81-11-11
РА, г. Ереван, ул. Железнодорожников-2, дом 2/3, ☎(+374 10) 43-50-34, факс (+374 10) 43-50-34, (+374 77) 81-11-11
House 2/3, Yerkatughayinery street 2, Yerevan sity, RA ☎(+374 10) 43-50-34, fax (+374 10) 43-50-34, (+374 77) 81-11-11
E-mail: HAMHK@mail.ru, hayocartsivner@mail.ru
www.hayocartsivner.am

*No. 024*

*«10» մարտի 2020 թ.*

Երևան քաղաքի քաղաքապետ
Հայկ Մարությանին

# Դ Ի Մ Ո Ւ Մ

Հարգելի՛ պարոն քաղաքապետ

Նորանկախ Հայաստանի պետականաշինության գործում լրջագույն ներդրում ունեցած և 15 տարիների ընթացքում շուրջ 1.500 հայրենասիրական և ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումներ կազմակերպած «Սյունյաց և Հայոց Արծիվներ» հայրենասիրական կազմակերպությունների (www.hayocartsivner.am) ավելի քան 300 մասնաճյուղերի ամուր հիմքի վրա ձևավորված «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» ազգային քրիստոնյա կուսակցությունը նախատեսում է սույն թվականի ապրիլի 7-ին՝ ժամը 17:00-ից մինչև 20:00-ն, Երևան քաղաքի Ազատության հրապարակում կազմակերպել խաղաղ հանրահավաք (ըստ ՀՀ «Հավաքների ազատության մասին» օրենքի՝ ընդունված 2011 թվականի ապրիլի 14-ին), [illegible] նույն թվականի ապրիլի 7-ին՝ ժամը 20:00-ից մինչև 22:00-ն, անցկ[illegible] երթ (ըստ ՀՀ «Հավաքների ազատության մասին» օրենքի ընդունված 2011 թվականի ապրիլի 14-ին)՝ Ազատության հրապարակից դեպի

1746505
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ,
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
No 01/27128 11.03.20

Թումանյան-Աբովյան փողոցներ, Հանրապետության հրապարակ, Նալբանդյան-Թումանյան փողոցներ՝ վերադարձ դեպի Ազատության հրապարակ երթուղիներով:

Վերոնշյալ հանրահավաքի և երթի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, բնակիչներին հաղորդել հստակ տեղեկություն՝ «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության ղեկավար կազմի՝ Նախագահության դիրքորոշման վերաբերյալ՝ կապված Հայաստանում և Հայաստանից դուրս տեղի ունեցող քաղաքական գործընթացների հետ, ինչպես նաև «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության կողմից Հայաստանի Հանրապետության Վարչապետին և Կառավարությանը սույն թվականի փետրվարի 20-ին ներկայացրած 10 պահանջների մասին:

Վերոնշյալ հանրահավաքի և երթի ժամանակ՝

1. Մասնակիցների սպասվող թիվը կլինի 1000-ից ավելի:
2. Կօգտագործենք տեխնիկական սարքավորումներ և ոչ միայն (ուժեղացուցիչ (ուսիլիտել), միկրոֆոններ, բարձրախոսներ, եռագույն դրոշներ, «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության դրոշներ, պաստառներ):
3. Կաշխատեն լուսանկարիչներ, օպերատորներ, լրագրողներ:
4. Կլինեն նվազագույնը 10-ը կարգադրիչներ, ովքեր իրենց վրա կկրեն սպիտակ, տեսանելի տարբերանշաններ, որոնց վրա գրված կլինի «Կարգադրիչ»:

Նախատեսվում է նաև սույն թվականի մարտի 27-ից մինչև ապրիլի 2-ը ներառյալ Երևան քաղաքի 12 վարչական շրջանների փողոցներում կազմակերպել իրազեկման միջոցառումներ. շրջել մեքենաներով և մեքենաների միջից բարձրախոսներով տարածել հայտարարություն, ինչպես նաև քաղաքացիներին բաժանել փոքրիկ տեղեկատվական թղթեր (15սմ X 21 սմ կամ A4 չափսի)՝ ապրիլի 2-ից 9-ը Ազատության հրապարակում տեղի ունենալիք հանրահավաքների և երթերի մասին:

Հարգելի՛ պարոն քաղաքապետ

Դիմում ենք Ձեզ խնդրանքով՝ օրենքի սահմաններում թույլատրել «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցությանը սույն թվականի ապրիլի 7-ին՝ ժամը 17:00-ից մինչև 22:00-ն Ազատության հրապարակում՝ վերոնշյալ երթուղիներով, կազմակերպել հանրահավաք

հանրահավաք և խաղաղ երթ. վերոնշյալ հանրահավաքն ու երթն ընդունել ի գիտություն:

Միաժամանակ խնդրում ենք ցուցաբերել միջնորդություն՝ ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի ոստիկանության վարչության օժանդակությամբ ապահովել հանրահավաքի և երթի անվտանգությունը:

Խնդրում ենք նաև թույլատրել և ընդունել ի գիտություն՝ սույն թվականի մարտի 27-ից մինչև ապրիլի 2-ը ներառյալ Երևան քաղաքի 12 վարչական շրջանների փողոցներում կազմակերպվելիք իրազեկման միջոցառումների կայացումը:

Վերոնշյալ հանրահավաքի և երթի, Երևան քաղաքի 12 վարչական շրջանների փողոցներում կազմակերպվելիք իրազեկման միջոցառումների կազմակերպիչներն ու ղեկավարներն են.

| Հ/Հ | Անուն Ազգանուն Հայրանուն | Անձնագիր | Հեռախոսահամար | Էլ.հասցե | Փոստային հասցե |
|---|---|---|---|---|---|
| 1. | Գարեգին Բարխուդարյան Ալբերտի | 010 AT0375474 | 098888977 | hayocartsivner@mail.ru | ՀՀ, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Երկաթուղայինների 2 փ., տուն 2/3 |
| 2. | Էդգար Ավետիսյան Սմբատի | 044 AT0368895 | 098811101 | hayocartsivner@mail.ru | ՀՀ, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Երկաթուղայինների 2 փ., տուն 2/3 |
| 3. | Սամսոն Չիրոյան Մամիկոնի | 001 AS0206796 | 098999971 | hayocartsivner@mail.ru | ՀՀ, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Երկաթուղայինների 2 փ., տուն 2/3 |
| 4. | Խաչիկ Ասրյան Մայիսի | 010 AS0581111 | 098811111 | hayocartsivner@mail.ru | ՀՀ, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Երկաթուղայինների 2 փ., տուն 2/3 |

Կից ներկայացնում ենք «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության ղեկավար կազմի՝ Նախագահության որոշումը՝ վերոնշյալ հանրահավաքի և վերոնշյալ երթի մասին:

Կից ներկայացնում ենք նաև «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության կողմից Հայաստանի Հանրապետության Վարչապետին և Կառավարությանը սույն թվականի փետրվարի 20-ին ներկայացրած 10 պահանջները:

Կուսակցության նախագահ՝ Խաչիկ Մայիսի Ասրյան